

**«ԱՌԱՆՁԻՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ
ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՍՐԱՀՆԵՐԻՑ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ
ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ**

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

2020 թվականի _____-ի N _____-Ա

**ԱՌԱՆՁԻՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՍՐԱՀՆԵՐԻՑ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ
ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7.9-րդ հոդվածի 3-րդ մասի՝

1.Սահմանել «Առանձին դեպքերում Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում առանձնացված հատուկ սրահներից այլ անձանց օգտվելու կարգ»-ը՝ համաձայն հավելվածի:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված

ՀՀ վարչապետի 2020թ.

_____ -ի

N _____-Ա որոշման

ԿԱՐԳ

ԱՌԱՆՁԻՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՍՐԱՀՆԵՐԻՑ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՕԳՏՎԵԼՈՒ

1.Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում առանձնացված հատուկ սրահներից (այսուհետ՝ Հատուկ սրահ) այլ անձանց օգտվելու ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:

2.Առանձին դեպքերում Հայաստանի Հանրապետության Վարչապետի համաձայնությամբ Հատուկ սրահից կարող են օգտվել նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Արցախի Հանրապետության Նախագահը և նրան ուղեկցող ընտանիքի անդամները, ՀՀ փոխվարչապետները և նրանց ուղեկցող ընտանիքի անդամները, ՀՀ անվտանգության խորհրդի անդամները, ինչպես նաև ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նախագահի և սույն կետում նշված պաշտոնատար անձանց կողմից հրավիրված օտարերկրյա պաշտոնական պատվիրակությունների անդամները:

3.Կարգի 2-րդ կետում նշված պաշտոնատար անձանց և Ամենայն Հայոց Կաթողիկոսի արարողակարգային ծառայությունները չվերթից առնվազն երեք աշխատանքային օր առաջ դիմում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ նշելով Հատուկ սրահից օգտվելու անհրաժեշտության հիմնավորումը, մեկնող կամ ժամանող անձանց անձնագրային տվյալները և չվերթի կատարման ժամկետների վերաբերյալ տվյալները:

4.Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը քննարկում է դիմումը երկու աշխատանքային օրվա ընթացքում և դիմող կողմին տեղեկացնում է Հատուկ սրահից օգտվելու թույլտվության կամ դիմումի մերժման մասին:

